

ԱՍԱՏՈՒՐ ՍԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

Երեւանի Ն. Վ. Գոգոլի անվան հ. 35 հ/դ տնօրեն

ՈՒՂԵԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԴԱՆՈՒՍՈՒՄ

Նեթանոսական ժամանակներին բնորոշ ուխտագնացությունները՝ իբրեւ քրիստոնեական հավատքի ձեւ, հետագա դարերում եւս շարունակում են լայն տարածում ունենալ Հայաստանում՝ սկսած քրիստոնեության ընդունման դեռեւս առաջին տարիներից։ Հայ ուխտավորները մեծ մասամբ ուխտագնացություններ են ձեռնարկել դեպի քրիստոնյա աշխարհի հանրահայտ սրբատեղիները՝ Երուսաղեմ, Հռոմ, Կոմպոստելա, Կոստանդնուպոլիս եւ այլ քաղաքներ։ Նրանք բնականաբար անտարբեր չեն մնացել նաեւ բուն Հայաստանի կարեւոր սրբավայրերի նկատմամբ։ Բազմաթիվ դեպքերում ուխտագնացները թողել են այցելավայրերի մասին գրավոր հիշատակություններ, որոնցից առավել ընդարձակները վերածվել են գրական ստեղծագործությունների՝ ուղեգրությունների։

Հայկական միջնադարից մեզ են հասել արձակ ու չափաբերված մի շարք ուղեգրություններ, որոնք, ըստ մեծի մասին, ուխտագնացության նպատակով կատարված ուղեւորությունների հեղինակային պատկերումներ են։ Այդ գործերում ուխտագնացները նկարագրում են ուղեւորությանն առնչվող մանրամասներ՝ ճանապարհին ընկած բնակավայրեր, հանդիպած ժողովուրդների, նշանավոր վանքեր ու եկեղեցիներ, դրանցում պահվող մասունքներ եւ այլն, եւ որ ավելի կարեւոր է, տեսածի վերաբերյալ սեփական խոհերն ու զգացմունքները։ Նման հեղինակների շնորհիվ հարստացել է հայկական ուղեգրապատումը հատկապես ԺԵ.—ԺԷ. դարերում։

«Էջմիածին» ամսագիրը, ունենալով առաջին հերթին կրոնակեղեցական ուղղվածություն, սկսած 1944 թվականից մինչեւ մեր ժամանակները՝ իր էջերում մեծ տեղ է հատկացրել ուխտագնացություններ պատկերող ուղեգրական երկերի հրատարակմանը։ Դրանով այն շարունակել է ամենից առաջ իր նախորդի՝ «Արարատ»-ի, ապա նաեւ ԺԹ. եւ Ի. դարերի

հայկական մամուլի ավանդույթները: Կարելի է ասել, որ չկա Հայաստանում եւ արտերկրում այդ դարերում լույս տեսած որեւէ պարբերական, որն իր էջերում ուղեգրություններ չի հրատարակել: Հատկանշական է այն փաստը, որ հայ իրականության մեջ ուղեգրական բնույթ ունեցող գործերի առաջին նմուշները երեւան են գալիս հայ պարբերական մամուլի հենց սկզբնավորման հետ միաժամանակ. դրանք հրատարակել է ոչ այլ ոք, քան Հարություն քահանա Շմավոնյանը «Ազդարարի»՝ հայկական մամուլի առաջնեկի էջերում, ընդ որում, պարբերականի առաջին տարվա՝ 1794 թվականի երրորդ համարում: Հարություն Շմավոնյանին հասցեագրված երկու նամակներն իրավամբ կարելի է ուղեգրական համարել: Թղթի եւ ուղեգրության տեսակներն իրենց գրվածքներում համադրել են Պետրոս Հարությունյանը («Սրբակրօն տէր Յարութին Շմաւոնեան...») եւ Խաչիկ Ծատուր Զարիֆյանը («Յատորս գրոյ միոյ գրեալ ի պարօն Խաչիկ Ծատուր Զարիֆեանէ...»)՝ նկարագրելով իրենց տառապալից ու փորձություններով լի ծովային ճամփորդությունները: Սրանք, փաստորեն, ոչ միայն հայ մամուլում, այլեւ առհասարակ հայկական իրականության մեջ առաջին տպագրված ուղեգրական գրվածքներն են:

Հետաքրքիր է նաեւ թեմայի հետ կապված մեկ այլ իրողություն. «Արարատ» հանդեսը, բացի այն, որ իր էջերում գետեղել է իր ժամանակի ուղեգրողների գործերը, նաեւ 1869 թվականի հունվարյան համարում հրատարակել է հայկական միջնադարյան ուղեգրությունների առաջին շրջանը (Ե.—ԺԴ. դարեր) ներկայացնող ուշագրավ երկերից մեկի՝ Նղիշի՝ Տիրոջ այլակերպության մասին հայտնի ճառի վերջնամասը՝ «Սրբոյն Նղիշէի վարդապետի ասացեալ յաղագս Թաբոր լերին» վերտառությամբ: Ճառի այս հատվածը մաքուր ուղեգրական բնույթ ունի: Այստեղ Վարդանանց պատերազմի տարեգիրն առաջին դեմքով նկարագրում է «Հայոց աշխարհին վիճակված աղետից հետո վրա հասած հարաբերական խաղաղության միջոցին» իր կատարած ուխտագնացությունը դեպի Պաղեստին, մասնավորապես ընկերակիցների հետ այցելությունը Թաբոր լեռ, որի վրա, ըստ Աստվածաշնչի, տեղի է ունեցել Քրիստոսի պայծառակերպությունը¹: «Վասն լերինն գեղեցկութեան եւ վայրացն վայելչութեան եթէ կամիք ախորժելով ունկն դնել, սակավիկ մի երկրորդեցից գտեսիլ ցանկալի տեղոյն, լսելով յԱւետարանէն գիտէք ամէնէքի, բայց

¹ Տե՛ս Ա. ՄՈՒՇԵԳՅԱՆ, Վարդանանց պատմության հեղինակ Նղիշեն եւ նրա նոր անձնավորության բացահայտումը, «Էջմիածին», 2013, ԺԲ., էջ 53:

մեր անձամբ իսկ հասեալ եւ աչօք մեր տեսեալ ոչ միայն առանձին, այլ բազում ընկերօք սրբովք»²: Եղիշէի «Ի Թաբոր լերին» վերնագրով ճառին «Էջմիածին» ամսագրում անդրադարձել է նաեւ Ալբերտ Մուշեղյանը «Վարդանանց պատմութեան հեղինակ Եղիշէն եւ նրա նոր անձնավորութեան բացահայտումը» ծավալուն հոգովածում³:

Ինչպես վերը նշեցինք, «Էջմիածին» հանդեսում հրատարակվել են բազմաթիվ ու բազմապիսի ուխտագնացական ճամփորդական նոթեր, որոնց շարքում, թերեւս, բացառութիւն են Աշոտ Աբրահամյանի «Վեց ամիս Մերձավոր Արեւելքում» (ճանապարհորդական տպավորութիւններ)⁴ ուղեգրութիւնը եւ Զապել Եսայանի՝ 1911 թ. լույս ընծայված «Ավերակներուն մեջ» գրքի «Պատարագը» գլխի մի հատվածի վերահրատարակութիւնը⁵, որոնք ուխտագնացութիւնների պատկերումներ չեն: Ստորեւ բերվող նյութերի միայն հեղինակների ու վերնագրերի պարզ թվարկումը ցույց է տալիս, որ բոլոր այդ ուղեգրութիւնները դեպի հայրենական սրբատեղիներ կատարված ուխտավորական այցելութիւնների արդյունք են. Դերենիկ վարդապետ, «Ուխտավորի մը հուշատետրեն»⁶, Լ. Աճեմյան, «Զբոսապտույտ դեպի Գեղարդ եւ Գառնի»⁷, Վահե-Վահյան, «Էջմիածին—Զվարթնոց»⁸, Մարտիրոս Տեր-Ստեփանյան, «Ուղեւորի տպավորութիւններ»⁹, Ռուբեն սարկավազ Մարտիրոսյան, «Ուխտագնացութիւն դեպի Օշական»¹⁰, Դերենիկ Եպիսկոպոս Փոլատյան, «Ուղեւորութիւն ի Սուրբ Էջմիածին»¹¹, Կիրակոս Ղազանչյան, «Ուխտավորի

² «Սրբոյն Եղիշէի վարդապետի ասացեալ յաղագս Թաբոր լերին», «Արարատ», 1869, Ա., էջ 123:

³ Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ, Վարդանանց պատմութեան հեղինակ Եղիշէն եւ նրա նոր անձնավորութեան բացահայտումը, «Էջմիածին», 2013, ԺԲ., էջ 37—54:

⁴ Ա. ԱՐԲԱՆՅԱՆ, Վեց ամիս Մերձավոր Արեւելքում (ճանապարհորդական տպավորութիւններ), «Էջմիածին», 1945, Ա.—Բ., էջ 45—48:

⁵ Զ. ԵՍԱՅԱՆ, Ավերակների մեջ, «Էջմիածին», 2003, Գ.—Դ., էջ 161—164:

⁶ ԴԵՐԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ, Ուխտավորի մը հուշատետրեն, «Էջմիածին», 1945, Զ.—Է., էջ 55—57:

⁷ Լ. ԱՃԵՄՅԱՆ, Զբոսապտույտ դեպի Գեղարդ եւ Գառնի, «Էջմիածին», 1950, Է.—Ը., էջ 70—73:

⁸ ՎԱՀԵ-ՎԱՀՅԱՆ, Էջմիածին—Զվարթնոց, «Էջմիածին», 1951, Ա.—Գ., էջ 35—38:

⁹ Մ. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ, Ուղեւորի տպավորութիւններ Բեյրութից Նրեւան, «Էջմիածին», 1952, Գ., էջ 18—22:

¹⁰ Ռ. ՍՐԿ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Ուխտագնացութիւն դեպի Օշական, «Էջմիածին», 1953, Զ., էջ 39—42:

¹¹ ԴԵՐԵՆԻԿ ԵՊՍ. ՓՈԼԱՏՅԱՆ, Ուղեւորութիւն ի Սուրբ Էջմիածին, «Էջմիածին», 1954, Դ., էջ 45—54:

նամականեր»¹², Տ. Սեպուհի Չուլջյան, «Ուխտագնացություն Արեւմտյան Հայաստան»¹³ եւ այլն: Նշված ուղեգրությունները կարեւորություն են ուղեգրության տեսակի զարգացման պատմությունը պատկերացնելու տեսանկյունից: Մենք գիտենք, որ ԺԹ. եւ Ի. դարերում ուղեգրության տեսակը գրեթե լիովին ձեռքազատվում է ուշմիջնադարյան ուղեգրություններին հատուկ որոշակի կաղապարային ձևերից:

«Էջմիածին» ամսագրի գրական պատասխանատուներն աչքաթող չեն արել նաեւ օտար հեղինակների՝ հայկական թեմային, հայրենական սրբավայրերին՝ մասնավորապես Ս. Էջմիածնին վերաբերող ուղեգրական կամ հուշագրական երկերին կատարվող անդրադարձները: Այստեղ կարելի է առանձնացնել Հ. Հանանյանի «Հենրի Մարտինը Էջմիածնում 1812 թվին»¹⁴, Կ. Գ.-ի «Էջմիածնի մայր տաճարը ռուս գրողների եւ ճանապարհորդների օրագրերում»¹⁵, Կ. Գրիգորյանի «Ս. Էջմիածինը ռուս մարդկանց ճանապարհորդական նոթերում ու հուշերում»¹⁶, Գ. Պողոսյանի «Եւրոպական ուղեգրողները Ս. Էջմիածնի, հայոց եկեղեցու սրբությունների եւ սրբալույս մյուռոնի մասին. Ժան Շարդեն», նույն հետազոտողի «Սրբալույս մյուռոնը օտարազգի հեղինակների բնորոշումներում եւ ուղեգրողների նկարագրություններում»¹⁷, Գ. Մադոյանի «Միջնադարյան մի ուղեգրական անդրադարձ Հայաստանին»¹⁸ գործերը:

Մեզ ներկա պարագայում առավելաբար հետաքրքրում են հայկական ուղեգրապատմի դասական օրինակներին վերաբերող անդրադարձումները, ինչպես այդ գրական ժանրի տեսական բնութագրումներ պարունակող հոգվածները, որ տարբեր տարիներին տեղ են գտել «Էջմիածին» հանդեսում: Այսպես՝ ամսագիրը բավական հաճախ

¹² Կ. ՂԱԶԱՆՉՅԱՆ, Ուխտավորի նամականեր, «Էջմիածին», 2008, Թ., էջ 88–91:

¹³ Տ. Ս. ԵՊՍ. ՉՈՒԼՋՅԱՆ, Ուխտագնացություն Արեւմտյան Հայաստան, «Էջմիածին», 2009, Զ. էջ 110–115:

¹⁴ Հ. ՀԱՆԱՆՅԱՆ, Հենրի Մարտինը Էջմիածնում 1812 թվին, «Էջմիածին», 1948, Գ.–Դ., էջ 58–61:

¹⁵ Կ. Գ., Էջմիածնի մայր տաճարը ռուս գրողների եւ ճանապարհորդների օրագրերում, «Էջմիածին», 1956, Ա., էջ 58–59:

¹⁶ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ս. Էջմիածինը ռուս մարդկանց ճանապարհորդական նոթերում ու հուշերում, «Էջմիածին», 1978, Դ., էջ 57–63:

¹⁷ Գ. ՊՈԳՈՍՅԱՆ, Եւրոպական ուղեգրողները Ս. Էջմիածնի, հայոց եկեղեցու սրբությունների եւ սրբալույս մյուռոնի մասին. Ժան Շարդեն, «Էջմիածին», 2008, Բ., էջ 104–108. նույնի՝ Սրբալույս մյուռոնը օտարազգի հեղինակների բնորոշումներում եւ ուղեգրողների նկարագրություններում, «Էջմիածին», 2008, Թ., էջ 110–120:

¹⁸ Գ. ՄԱԴՈՅԱՆ, Միջնադարյան մի ուղեգրական անդրադարձ Հայաստանին, «Էջմիածին», 2011, ԺԲ., էջ 101–107:

է անդրադարձել Գարեգին Սրվանձտյանցին եւ Մեսրոպ Թաղիադյանին, թեպետ առանձին հոգվածներով նրանց ուղեգրական երկերը չեն վերլուծվել: Գարեգին Սրվանձտյանցի ուղեգրական բնույթի գործերը՝ հատկապես «Թորոս Աղբար կամ Հայաստանի ճամբորդ» (1879 թ.) եւ «Համով-հոտով» (1884 թ.) երկերը հանգամանալից քննության են արժանացել Վարդ Բդոյանի «Հայրենիքը Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանի երկերում» եւ «Հայրենասիրությունը Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանի երկերում»¹⁹ հոգվածներում: Սրվանձտյանն իր «...եւկու ուղեւորությամբ ուտով գծեց Հայաստանի փառեզր: Եղավ այնտեղ, ուր ոչ ոք սիրտ չէր անում լինել, մտավ այնտեղ, ուր մահ ու սարսուռ էր տիրում»²⁰: Ուսումնասիրողի դիտումի համաձայն՝ Սրվանձտյանցը «ուղեւորի գավազանն» իր ձեռքն էր վերցրել Հայոց գավառների մասին տնտեսական ու վիճակագրական տվյալներ կազմելու հանձնարարականով, սակայն չի սահմանափակվել աշխարհագրական չոր գիտանքների կամ վիճակագրական թվերի հաղորդումով: Սրվանձտյանցի ուղեգրական երկերը դարձել են իսկական գրական ստեղծագործություններ: Գարեգին Սրվանձտյանցի ուղեգրություններին «էջմիածին» էջերում անդրադարձել է նաեւ Հրաչյա Աճառյանը: Իր «Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանց»²¹ վերնագրով հոգվածում մեծ հայագետը, Սրվանձտյանցի կատարած ճանապարհորդություններին եւ իրականացրած գործունեությանը զուգահեռ, քննում է նաեւ հեղինակի գրական ժառանգության ուղեգրական նմուշները՝ անելով արժեքավոր եզրահանգումներ: Սրվանձտյանցի ստեղծագործություններում «Գրական գույնը սկսում է երեւան գալ Մանանայի եւ Թորոս Աղբարի մեջ, իսկ Համով-հոտովի մեջ հասնում է իր կատարելության: Փոխանակ չոր ու ցամաք տեղագրության,— գրում է Աճառյանը,— այստեղ նա տալիս է մեզ հայրենի երկրի տեսարաններից այնպիսի հրաշալի պատկերներ, այնպիսի բանաստեղծական երփներանգ գրչով ու հայրենասիրական խանդավառ զգացմունքներով գծված, որ անկարելի է հեղինակի հետ չզգալ, չհմայվել, չարտասովել:

¹⁹ Վ. ԲՆՈՅԱՆ, Հայրենիքը Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանի երկերում, «էջմիածին», 1944, Բ.—Գ., էջ 38—46. նույնի՝ Հայրենասիրությունը Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանի երկերում, «էջմիածին», 1944, Դ.—Ե., էջ 27—37:

²⁰ Վ. ԲՆՈՅԱՆ, Հայրենասիրությունը Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանի երկերում, «էջմիածին», 1944, Դ.—Ե., էջ 31:

²¹ Հ. ԲՆՈՅԱՆ, Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանց, «էջմիածին», 1950, Ե.—Զ., էջ 29—32:

Հատկապես գեղեցիկ են Նարեկի, Արտամեսի, Վանա ծովակի, Սեպուհի նկարագիրները»²²:

ԺԹ. դարի մյուս նշանավոր գործչին անդրադարձել է «Շ. էդ.» ստորագրությամբ հեղինակը «Մեսրոպ Թաղիադյան» հոգվածում²³: Հաղորդման մեջ ներկայացված են Թաղիադյանի կյանքը, նրա ուղեւորությունները: Հեղինակն առավել մանրամասն վերլուծել է նրա գեղարվեստական ստեղծագործությունը՝ ժլատ տողեր հատկացնելով «Ճանապարհորդութիւն ի Հայս» գրքին, որը կարելի էր տեղ է գրավում Թաղիադյանի ժառանգության մեջ: Գ. Հարությունյանի «Նորահայտ նյութեր Մեսրոպ Թաղիադյանի մասին» հոգվածում²⁴ գիտական շրջանառության մեջ են դրվում կենսագրական նոր փաստեր, Թաղիադյանի շրջագայություններին վերաբերող մանրամասներ: Այստեղ հարկ է հիշել նաեւ Մեսրոպ Թաղիադյանի 100-ամյակի առթիվ Լ. Ամատունու հեղինակած հոբելյանական հոգվածը²⁵: Հոգվածը շատ տեղերում ուղղակի բառացի արտագրությունն է «Շ. էդ.» ստորագրած հեղինակի գրչին պատկանող հոգվածի, որի մասին խոսեցինք վերելում: Ահա՛ «Բացի վերը նշված մասնագիտությունից (մանկավարժի մասին է խոսքը.— Ա. Ս.)՝ Թաղիադյանը նաեւ պատմագիր էր: Նա գրել է Հայաստանի պատմությանը նվիրված մի հատոր՝ «Ճանապարհորդութիւն ի Հայս» գիրքը, որը նրա թողած ժառանգության մեջ առանձին արժեք ունի»²⁶: «Բացի այդ՝ նա պատմագետ է: Նա գրել է Հնդկաստանի պատմությանը նվիրված մի հատոր, եւ «Ճանապարհորդութիւն ի Հայս» գիրքը, որ նրա թողած ժառանգության մեջ մի առանձին արժեք ունի»²⁷: Բերենք եւս մեկ օրինակ՝ «Այստեղ Թաղիադյանը նկարագրում է էջմիածինը, նրա ներքին կյանքը, միաբանության անդամների հարաբերությունները...: Այս գրքի մեջ է, որ Թաղիադյանը հանդես է գալիս ճորտատիրության դեմ»²⁸: Լ. Ամատունին գրում է. «Բացի այդ, ճանապարհորդության մեջ նկարագրված է էջմիածինը, նրա ներքին կյանքը, միաբանության անդամների հարաբերություն-

²² Անդ, էջ 30:

²³ Շ. էդ., Մեսրոպ Թաղիադյան, «էջմիածին», 1947, Ա.—Բ., էջ 55—58:

²⁴ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Նորահայտ նյութեր Մեսրոպ Թաղիադյանի մասին, «էջմիածին», 1947, Գ.—Դ., էջ 31—43:

²⁵ Լ. ԱՄԱՏՈՒՆԻ, Մեսրոպ Թաղիադյան, «էջմիածին», 1956, Դ.—Ե., էջ 93—96:

²⁶ Շ. էդ., Մեսրոպ Թաղիադյան, «էջմիածին», 1947, Ա.—Բ., էջ 56:

²⁷ Լ. ԱՄԱՏՈՒՆԻ, Մեսրոպ Թաղիադյան, «էջմիածին», 1956, Դ.—Ե., էջ 94:

²⁸ Շ. էդ., Մեսրոպ Թաղիադյան, «էջմիածին», 1947, Ա.—Բ., էջ 56:

ները: Այս գրքի մեջ է, որ Թաղիադյանը հանդես է գալիս ճորտատիրությունից դեմ»²⁹: Մեսրոպ Թաղիադյանին «էջմիածինը» մեկ անգամ եւս անդրադարձել է 1976 թվականին՝ հրատարակելով «Մեսրոպ Թաղիադյան, Ուղեգրություններ, հոգվածներ, նամակներ, վավերագրեր»՝ նույն տարում «Գրական ժառանգություն» մատենաշարով լույս տեսած գրքի վերաբերյալ մի գրախոսություն, որի հեղինակը Ա. Հ.-ն է: Այստեղ բավական մանրամասնորեն ներկայացված է գրախոսվող հատորում ընդգրկված «Ճանապարհորդություն Մեսրոպբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. Սարկալագի սրբոյ էջմիածնի ի Հայս» ուղեգրությունը, տրված է այդ երկի բոլոր վեց հատվածների համառոտ նկարագրությունը: Գրախոսը նաեւ կարճառոտ անդրադառնում է նույն գրքում առաջին անգամ հրատարակվող «Ճանապարհորդություն Մ. Դ. Թաղիադեանց ի Պարսկաստան» վերտառությունից ուղեգրական գործին, որը կազմում է նախորդ ուղեգրության շարունակությունը:

«էջմիածին» հանդեսի էջերում ուշ միջնադարի հայկական ուղեգրություններին կարելուր անդրադարձներ են կատարվել նաեւ հայ-հաբեշական եւ հայ-պորտուգալական հարաբերություններին նվիրված ուսումնասիրություններում: Ինքնին հասկանալի է, որ տվյալ դեպքերում հետազոտողները կարելուր են ուղեգրական բնագրերի պատմագիտական-աղբյուրագիտական դերն ու նշանակությունը: Հ. Թուրշյանն իր «Հայ-հաբեշական եկեղեցական առնչություններ» ուսումնասիրության մեջ³⁰ անցողակի կերպով հիշում է իսաաթուր երեց Թոխաթցու (Եւդոկիացու) «Պատմություն Վենետիկ քաղաքին» չափածո ուղեգրությունը՝ ընդգծելով, որ «Բազմավեպի» հրատարակիչները բանաստեղծությունը գրված են համարում 1500–1600 թվականների միջեւ ընկած ժամանակաշրջանում: «Մեզ համար ուշագրավն այն է, — գրում է հայ-հաբեշական կապերն ուսումնասիրողը, — որ բանաստեղծությունը գրողն ապրել է 16-րդ դարում, եւ որ նա իրեն անվանում է իսաաթուր երեց Հաբեշացի»³¹: Հետագայում ապացուցվել է, որ իսաաթուրը եղել է Թոխաթցի կամ Եւդոկիացի: Վերջինս ձեռագրերում շփոթվել է Եթովպիացու հետ, որն էլ սխալմամբ դարձել է Հաբեշացի: Նույն տեղում Հ. Թուրշյանը հիշում

²⁹ Լ. ԱՄԱՏՈՒՆԻ, Մեսրոպ Թաղիադյան, «էջմիածին», 1956, Դ.-Ե., էջ 94:

³⁰ Հ. ԹՈՒՐՇՅԱՆ, Հայ-հաբեշական եկեղեցական առնչություններ, «էջմիածին», 1956, ԺԱ.-ԺԲ., էջ 77–81:

³¹ Անդ, էջ 77:

է Հովհաննես արք. Աղթամարցու (նաեւ՝ Թուրքունջի, Վանեցի, Արեւել-ցի) հայտնի ուղեգրության մասին: Բանասերը բերում է 1618 թվականին Եթովպիա կատարված ուղեւորության շնորհիվ ստեղծված ուղեգրության հրատարակման պատմությունը, ապա նշում, որ «Նույն ուղեգրության մասին հետաքրքիր ուսումնասիրություն է գրել արեւմտահայ հայտնի բանասեր Ա. Ալպոյաճյանը «Առաքելություն ի Հապէշստան Ժէ. դարուն», Կահիրե, 1946 թ.)»³²: Ամենայն հավանականությամբ հենց այդ պատճառով Հ. Թուրշյանը չի կենտրոնանում այս ուղեգրության մանրամասների վրա: Թուրշյանի նույն հոդվածի՝ «Էջմիածին» ամսագրի 1956 թվականի Ը.—Թ. միացյալ համարում հրատարակված մասում կարդում ենք արդեն ԺԸ. դարում (1762 թ.) հաբեշների երկիր այցելած մեկ այլ հեղինակի՝ Հովհաննես Թովմաջանի (Թովմաճանյան) մասին³³: Հետաքրքիր է, որ հոդվածագիրը Թովմաջանի ուղեգրության մասին որեւէ բան անգամ չի ակնարկում եւ բավարարվում է նրա միայն անունը նշելով: Նույն տեղում Թուրշյանն անդրադառնում է Է. դարի մատենագիր Անաստաս վարդապետ Գաղատիացու (Հերապոլսեցի) «Վասն վանորէից որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ» ուղեգրական բնույթ ունեցող գրվածքին: Ծովագ աշխարհի տեր Համազասպ Կամսարական Պահլավունի իշխանի պատվերով Տնօրինական տեղեր մեկնած եւ Երուսաղեմի ու նրա շրջակայքի յոթանասուն (որոշ ձեռագրերում՝ յոթանասուներկու) հայկական վանքերի ու եկեղեցիների ցանկը կազմած Անաստաս վարդապետի ուղեցույց-ուղեգրության մասին իր «Հայկական Երուսաղեմ» հոդվածում³⁴ հիշում է նաեւ Կյուրեղ վարդապետ Գաբրիելյանը: Այս գործը, ինչպես եւ վերելում մեր հիշատակած Եղիշեի Ճառի՝ դեպի Թաբոր լեռ կատարած այցելությանը վերաբերող ուղեգրական հատվածը, կազմում են հայկական ուղեգրությունների պատմության առաջին շրջանը, երբ ուղեգրության տեսակն իր սկզբնավորման փուլում էր եւ լիովին չէր տարանջատվել միջնադարում տարածված մյուս գրական տեսակներից:

Եւ վերջապես ԺԷ. դարի ուղեգիրներին ու նրանց ուղեգրություններին իր «Պորտուգալ եւ Հայաստան»³⁵ աշխատության մեջ անդրադարձ է

³² Անդ:

³³ Հ. ԹՈՒՐՇՅԱՆ, Հայ-հաբեշական եկեղեցական առնչություններ, «Էջմիածին», 1956, Ը.—Թ., էջ 86—92:

³⁴ ԿՅՈՒՐԵՂ ՎՐԻ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ, Հայկական Երուսաղեմ, «Էջմիածին», 1963, Բ., էջ 49—55:

³⁵ Ա. ԱԼՊՈՅԱՃՅԱՆ, Պորտուգալ եւ Հայաստան, «Էջմիածին», 1963, ԺԲ., էջ 43—51 եւ 1964, Ա., էջ 17—24:

կատարել Արշակ Ալպոյաճյանը: Հոգվածը «էջմիածինը» հրատարակել է վաստակաշատ հայագետի մահից հետո: Ինչպես տողատակի ծանոթագրության մեջ նշում են հրատարակիչները, Ալպոյաճյանը սույն ուսումնասիրությունը գրել է 1960 թ. «Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հրավերով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Լիսաբոն այցելության առթիվ»: «Պորտուգալ եւ Հայաստան» հոգվածի «Հայեր Պորտուգալի մեջ» գլխում հեղինակը բավականին երկար խոսում է Սիմեոն Դպիր Լեհացու եւ Օգոստինոս Բաշենցի ուղեգրությունների մասին, ուշադրություն է դարձնում ուղեգիրների հաղորդած այն «տեղեկություններին եւ դիտողություններին», որոնք հետաքրքրություն են ներկայացնում հայ-պորտուգալական հարաբերություններին առնչվող ինչ-ինչ հարցերի լուսաբանման տեսակետից: Դիտելի է, որ Ալպոյաճյանը Պորտուգալիայում հայերի ներկայությունը հաստատող փաստերը հիմնավորելու առումով ավելի կարեւորում է այդ երկրում երբեւէ չճամփորդած Սիմեոն Լեհացու ուղեգրության մեջ առկա տվյալները, քան Լիզբոն այցելած եւ այն իր ուղեգրական երկում նկարագրած Օգոստինոս Բաշենցի հայտնած տեղեկությունները:

Վերը նշված հոգվածներում ուղեգրությունները մեծ մասամբ հիշատակվում են որպես պատմական արժանահավատ սկզբնաղբյուրներ, իբրեւ ականատեսի ու մասնակցի ստուգապատում վկայություններ պարունակող վավերագրեր: Խոսքը վերաբերում է թե՛ հայ, թե՛ օտար հեղինակների ճամփորդական նոթագրություններին: Կարելոր է, որ «էջմիածին» հանդեսում հրատարակված ուսումնասիրությունները դրանով չեն սահմանափակվում: Ամսագրում տեղ են գտել նաեւ հետազոտություններ, որոնց մեջ տեսական քննության են ենթարկվում ուղեգրությունները՝ որպես առաջին հերթին գրական ստեղծագործություններ: Գրականագիտական նմանօրինակ վերլուծություններ է ամփոփում տողերիս հեղինակի «Հայրենական սրբավայրերը ուշ միջնադարի ուղեգրություններում (Ժէ. դար)» խորագրով հոգվածը³⁶: Հոգվածում փորձել ենք սահմանել ուղեգրությունն իբրեւ ինքնուրույն եւ առանձին գրական տեսակ՝ ի մասնավորի խոսելով Սիմեոն Դպիր Լեհացու, Թովմա վարդապետ Վանանդեցու եւ Գրիգոր Գրչի (Մոկացի) ուղեգրական գործերի մասին: Ժէ. հայրյուրամյակի հենց այս ուխտագնացական ուղեգրություններից բերվող

³⁶ Ա. ՍԱՐՅԱՆ, Հայրենական սրբավայրերը ուշ միջնադարի ուղեգրություններում (Ժէ. դար), «էջմիածին», 1997, Ը.—Թ., էջ 142—149:

օրինակների հիման վրա ուսումնասիրության մեջ ցույց են տրվում հայկական միջնադարյան ուղեգրություններին բնորոշ կառուցվածքային ու բովանդակային ընդհանրությունները, խոսքի կառուցման այն, որոշ իմաստով, «կաղապարային» ձևերը, որոնցով միավորվում են միջնադարի հայկական ուղեգրությունները:

Թեպետ «էջմիածին» ամսագիրն իր պատմության բոլոր ժամանակներում հրատարակել է հայ հին եւ միջնադարյան մատենագրության անտիպ երկերի բնագրեր, սակայն փաստ է, որ հայկական միջնադարյան ուղեգրությունների հրապարակումը դուրս է մնացել խմբագիրների տեսադաշտից: Մենք վերելում տեսանք, որ հանգեսի էջերում հրատարակվել են միայն ժամանակակից հեղինակների ուղեգրական գործերը: Ծանաչված հայագետ Արշակ Մադոյանի անվան հետ է կապվում «էջմիածին» ամսագրում առաջին անգամ միջնադարյան հայկական ուղեգրության բնագիր հրապարակելու փաստը: 1998 թ. Ա. Մադոյանի աշխարհաբար թարգմանությամբ հրատարակվում է Մարտիրոս Եպիսկոպոս Երզնկացու ուղեգրությունը «Այս է պատմությունը ֆռանկների երկրի, որ տեսել է Երզնկացի Մարտիրոս Եպիսկոպոսը եւ գրել քաղաքների մասին, որոնք տեսա իմ աչքով, եւ այսպես եղավ»³⁷, որտեղ հեղինակը նկարագրում է 1489—1496 թթ. կատարած իր ուղեւորությունը դեպի Եւրոպա: Հրապարակման ներածության մեջ Ա. Մադոյանը նշում է, որ ուղեգրությունը աշխարհաբարի վերածելիս հիմք է ընդունվել Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 3488 ձեռագիրը, որ 1957-ին «Տեղեկագրում» (թիվ 6) հրատարակել է Վ. Հակոբյանը³⁸: Իսկ տեղանունների գրության հարցում նախապատվությունը տրվել է «Բազմավեպի» հրատարակությանը՝ կատարված Փարիզի ազգային մատենադարանի թիվ 65 ձեռագրից³⁹: Արշակ Մադոյանը Մարտիրոս Եպիսկոպոսի գրվածքը իրավամբ դիտարկում է որպես «հայ ուղեգրության առաջնեկ» այն իմաստով, որ եթե մինչեւ ժ.Ե. դարն ընկած շրջանը ուղեգրությունները կամ այլ տեսակների մաս էին կազմում (պատմագրություն, վկայաբանություն, ճառ եւ այլն), կամ ավելի շատ մոտենում էին ուղեցույցներին, ապա միայն Մարտիրոս Երզնկացու շնորհիվ ուղեգրությունը «իբրեւ ուրույն գրական

³⁷ Ա. ՄԱԴՈՅԱՆ, Հայ ուղեգրության առաջնեկը, «էջմիածին», 1998, Ե., էջ 89—96:

³⁸ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ, Մարտիրոս Երզնկացու ճանապարհորդական նոթերը, ՀԽՍՀ ԳԱ տեղեկագիր, 1957, №6, էջ 97—110:

³⁹ «Մարտիրոս Եպիսկոպոսի Երզնկացույ ուղեգրությունն ի Սպանիա», «Բազմավեպ», 1937, թ. 2—5, էջ 55—60:

տեսակ հայ իրականության մեջ առանձնացավ ու ձեւավորվեց»։ Նույն առաջաբանում Ա. Մադոյանն ուշադրություն է սեւեռում ուղեգրության լեզվին՝ կարեւորելով ուղեգրություններն առհասարակ նաեւ որպէս լեզվի պատմությունն ուսումնասիրելու համար արժեքավոր նյութ։ «Ներկա ուղեգրությունն այն երկերից է, որոնց հեղինակները, գրչի մարդ չլինելով, գրում են այնպես, ինչպես խոսում են, որ առավել հետաքրքիր է լեզվի պատմության տեսանկյունից»։ Վիճարկելով Վ. Հակոբյանի տեսակետը՝ Ա. Մադոյանը համոզմունք է հայտնում, որ Երզնկացիի «ծանոթ իմաստով մատենագիր չէ, այլ ճանապարհորդ...», եւ «կարելի է չնչին վերապահումով ասել, որ սա (ուղեգրությունը.— Ա. Ս.) նրա միակ երկն է»։ Միջնադարագետն ուշագրավ դիտողություններ է անում նաեւ Մարտիրոս Երզնկացու ուղեգրության ոճական առանձնահատկությունների վերաբերյալ՝ շեշտելով ուղեգրողի թողած որոշակի հետքը ԺԶ. եւ ԺԷ. դարերի համասեռ գրվածքների շարադրանքում։ «Հեղինակն իրեն չի նեղում գրական ինչ-որ կաղապարների հարմարվելու համար,— գրում է Մադոյանը։— Նրա դարձվածքները՝ «Ո՛վ կարող է լեզվով պատմել...» եւ այլն, հասարակ են դառնում հետագա ուղեգիրների համար եւս...»։ Արշակ Մադոյանի կարճ առաջաբանում արտահայտված վերլուծություններով ու տեսական եզրահանգումներով անգնահատելի քայլ է կատարվել հայ միջնադարյան ժանրային համակարգում ուղեգրության գրական տեսակը սահմանելու ճանապարհին։ Նրա առաջադրած մոտեցումները հետագայում լայնորեն օգտագործել են ուղեգրության տեսակի խնդիրներով զբաղվող մասնագետները։

Սիլվա Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են», «Խճանկար հոգու եւ քարտեզի գույներից», «Գույներ նույն խճանկարից» եւ «Իմ կածանը աշխարհի ճանապարհներին» ուղեգրություններին նվիրված հոդված է գրել Սեւակ Հակոբյանը՝ կենտրոնանալով դրանց գաղափարական բովանդակության մի կողմի վրա։ «Սիյուռքում հայոց լեզվի մոռացության եւ ձուլման վտանգի մտահոգությունը Սիլվա Կապուտիկյանի ուղեգրություններում» հոդվածը որեւէ նոր բան չի ավելացնում տեսակի ուսումնասիրության առումով, այն ամբողջությամբ կրում է նկարագրական բնույթ։ Հեղինակն ընդամենը վերաշարադրում է ուղեգրությունների իրեն հետաքրքրող հատվածները՝ առանց գոնե նշելու, թե, օրինակ, որքանով է Կապուտիկյանի գրիչը նորույթ բերել հայկական ուղեգրապատումին, կամ ինչքանով է բանաստեղծը հավատարիմ

մնացել տեսակի պահանջներին եւ կամ ինչ չափով է հեռացել ժանրի ավանդներից եւ այլն⁴⁰:

Սույն աշխատանքի մեջ մենք փորձեցինք ընդհանուր պատկերացումներ տալ այն մասին, թե ինչպիսին է «էջմիածին» հանդեսի անդրադարձն ուղեգրություններին: Տեսանք, որ ամսագիրը մեծ տեղ է տվել ժամանակակից հեղինակների ուղեգրությունների հրատարակմանը, պատմական-բանասիրական ուսումնասիրություններում հոդվածագիրներն արժեքավորել են միջնադարյան հայկական ուղեգրություններին արվող վկայակոչումները, առատ մեջբերումներ են արել բնագրերից, այս առումով չեն անտեսվել նաեւ օտար ուղեգրողների գործերը: Գրականագիտական բնույթ կրող հետազոտություններում հոդվածագիրները լայնորեն անդրադարձել են գրողների ուղեգրական երկերին, եւ, ի վերջո, «էջմիածնում» տպագրված հոդվածներում տրվել է միջնադարյան հայկական ուղեգրությունների ժանրային բնութագիրը, ուղեգրությունը դիտարկվել է որպես գրական կարեւոր տեսակ: Ուղեգրության տեսակի ուսումնասիրության պատկերը մեր գրական իրականության մեջ առանց «էջմիածին» հանդեսի նշված հրապարակումների, ինչ խոսք, թերի եւ ոչ լիարժեք կլիներ:

РЕЗЮМЕ

В публикации «Жанр путевых заметок в журнале «Эчмиадзин» дается тот целостный материал, связанный с жанром путевых заметок и отраженный в различных номерах вышеуказанного издания. Поскольку в основе путевых заметок, как правило, находятся описания паломничеств, а паломничество, как известно, занимает важное место в христианстве, то и произведения, относящиеся к этому же жанру, не могли не найти достойное отражение на страницах «Эчмиадзина». В статье представлены публикации как путевых заметок современных авторов, так и исследования, которые содержат ссылки на классические образцы того же жанра. В статье подчеркнута важность путевых заметок и как исторических источников, и как литературных произведений.

⁴⁰ Ս. ՀԱՎՈՐԵԱՆ, Սփյուռքում հայոց լեզվի մոռացության եւ ձուլման վտանգի մտահոգությունը Սիլվա Կապուտիկյանի ուղեգրություններում, «էջմիածին», 2008, Բ., էջ 125–132:

В данной публикации уделяется особое внимание исследованиям, содержащим анализ теоретических определений жанра путевых заметок, и, таким образом, дается оценка работ известного армяноведа Аршака Мадояна.

В статье предпринята попытка обосновать то, что публикациями и исследованиями журнала «Эчмиадзин» можно обобщить картину историко-филологических и литературоведческих исследований армянских путевых заметок.

SUMMARY

One can find all the materials related with travel notes in general, which is reflected in different issues of “Etchmiadzin” magazine in the article “The genre of travel notes in “Etchmiadzin” magazine”.

As travel notes are mainly based on descriptions of pilgrimages, and the pilgrimage is obviously not secondary to the Christian faith, therefore, the pages of “Etchmiadzin” could not fail to properly cover the works belonging to the same genre. This article focuses on the guide notes of the authors of the period of publication of the magazine, as well as studies that contain links to classic examples of the same genre. In this case, the authors of articles highlighted the importance of travel notes both as historical sources and as literary works.

The article pays special attention to studies that analyze the theoretical definitions of the genre of travel notes, thus, giving an assessment of the works of the famous Armenian Armenologist Arshak Madoyan.

The article tries to substantiate the fact that the publications and researches of «Etchmiadzin» magazine can complete the picture of the historical-philological and literary studies of Armenian travel notes.

